



Մեդիա և տեղեկատվական գրագիտություն՝ սովորել չդադարողների համար

ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կիսվե՛ք այս խորհուրդներով ձեր միջավայրում

Ուղեցույցը պատրաստվել է Հանրային լրագրության ակումբի «Մեդիա և տեղեկատվական գրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ պետքարտուղարության դրամաշնորհի աջակցությամբ:
Այստեղ արտահայտված կարծիքները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ:

Ծրագրի ղեկավար՝ Սեդա Մուրադյան





Ֆաշլ I

Ցանկացած բովանդակության ծանոթանալիս վերլուծե՛ք ներկայացված փաստերը՝ դրանք առանձնացնելով հուզական ֆոնից:

Ֆաշլ 2

Լուրը որոնե՛ք առնվազն 3 տարբեր արժանահավատ աղբյուրներում, այնուհետև համեմատե՛ք փաստերը:

Ֆաշլ 3

Արժանահավատ աղբյուրն ունի տեղեկություններ խմբագրակազմի և իր գործունեության մասին, հետադարձ կապի հնարավորություն և տարիների անաչառ աշխատանքի պատմություն:

Մեդիագրագիտությունն այն հմտությունների ամբողջությունն է, որը մարդկանց թույլ է տալիս ձեռք բերել, քննադատաբար գնահատել և ստեղծել մեդիա:

ԱՄՆ-ի Մեդիագրագիտության ուսուցման ազգային ասոցիացիա

Ֆաշլ 4

Կարևոր է հաշվի առնել, թե երբ, որտեղ և ում կողմից է հրապարակվել լուրը: Այն պետք է պատասխանի այս բոլոր հարցերին:

Ֆաշլ 5

Եթե լուրն էմոցիոնալ ազդեցություն է ունեցել ձեզ վրա, ապա մի՛ շտապեք այն տարածել. ստուգե՛ք, հավաստիացե՛ք, որ այն կեղծ չէ:

Ֆաշլ 6

Փաստերը ստուգման ենթակա տվյալներն են: Իսկ թե ինչպես դա անել, կօգնի **Փաստերի ռադարը**:



ԲԱՅԼ
1

Կարևոր և աշխատանքային հաղորդակցությունն իրականացրե՛ք էլեկտրոնային փոստերի միջոցով:

Թվային գրագիտությունը թվային տեխնոլոգիաների անվտանգ և պատշաճ կիրառմամբ տեղեկությունը գտնելու, այն կառավարելու, հասկանալու, հաղորդակցվելու, գնահատելու և ստեղծելու կարողությունն է:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Տեխնիկական և մասնագիտական կրթության և վերապատրաստման կենտրոն



ԲԱՅԼ
2

Գրե՛ք հայատառ, եթե սոցիալական մեդիայից, մեսենջերներից օգտվելիս, և ընդհանրապես, առցանց գրավոր հաղորդակցվելիս կիրառում եք հայերենը:



ԲԱՅԼ
3

Ցանկացած բովանդակություն հրապարակելիս իմացե՛ք, որ եթե անգամ ջնջեք, այն շարունակում է պահպանվել տվյալ ծառայությունների պահոցներում:

ԲԱՅԼ
4

Պահպանե՛ք էթիկայի կանոնները սոցիալական մեդիայում հաղորդակցվելիս, մեկնաբանություններ գրելիս:



ԲԱՅԼ
5

Մի՛ տարածեք ատելություն սերմանող բովանդակություն, այլ օգտատերերի հետ հաղորդակցվելիս եղե՛ք հանդուրժող:

ԲԱՅԼ
6

Առցանց հաղորդակցվելիս հետևե՛ք բարեկիրթ վարվեցողության նույն կանոններին, որոնք կիրառում եք առցանց տիրույթից դուրս:





Քննադատական մտածողությունը որևէ թեմայի կամ գաղափարի մասին ուշադիր մտածելու գործընթացն է, որտեղ զգացմունքներն ու կարծիքները չեն ազդում ձեզ վրա:

Քեմբրիջի բառարան

ֆաշլ I

Որևէ լուրի ծանոթանալիս, առաջին հերթին կասկածե՛ք, նորությունը մի՞ ընդունեք միանշանակորեն:

ֆաշլ 4

Տարանջատե՛ք փաստերը կարծիքից: Կարծիքը փաստի նկատմամբ մարդու վերաբերմունքն է: Իսկ փաստի վավերացումը ցանկալին որպես փաստ ներկայացնելու հնարքն է:

ֆաշլ 2

Շա՛տ հարցեր տվեք (ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ, ինչո՞ւ, ինչպե՞ս...): Փորձե՛ք պատասխանների միջև գտնել տրամաբանական կապ:

ֆաշլ 5

Հիշե՛ք, որ երբեմն սարկազմը, հեգնանքը և երգիծանքը օգտագործվում են որեւէ տեսակետ, գաղափար, գործընթաց ոչ ռացիոնալ, ծիծաղելի ու անհերթելի ներկայացնելու համար:

ֆաշլ 3

Հիշե՛ք՝ բովանդակության հետևում մարդն է. բոլորն էլ սխալվում են: Կան նաև տեքստեր, որոնք ավտոմատ գեներացվում են բոտերի ու արհեստական բանականության կողմից:

ֆաշլ 6

Տեղեկությունը համատեքստից դուրս և թերի ներկայացնելը կարող է մանիպուլյացիոն նպատակ հետապնդել:



Փաստերի ստուգումը բովանդակության, լուրի, որևէ ելույթի, ինչպես նաև լուսանկարում, տեսանյութում առկա փաստերի ճշգրտության ստուգումն է:

Քեմբրիջի բառարան

Ֆալս I

Հիշե՛ք, որ լուսանկարներն ու տեսանյութերն ունեն մետատվյալներ, որոնք հնարավոր է ստուգել **Փաստերի ռադարում** ներկայացված գործիքներով:



Ֆալս 5

Եթե որևէ բառ բացառում էր որոնման արդյունքում, ապա որոնման տեքստին զուգահեռ այն ավելացրեք այսպես՝ -բառ-:

Ֆալս 2

Մետատվյալները տվյալներ են մեդիա ֆայլի սկզբնաղբյուրի մասին՝ որտեղ, երբ, ում կողմից է այն արվել և բազմաթիվ այլ տեղեկություններ:




Ֆալս 4

Եթե որոնման արդյունքում ցանկանում եք գտնել որևէ ֆայլ, ապա որոնումից հետո գրե՛ք հետևյալը՝ օրինակ, filetype:pdf կամ filetype:doc (ppt, xlsx և այլն):

Ֆալս 3

Որոնողական համակարգերն ունեն գործիքներ, որոնք կոնկրետացնում են որոնումը. հստակ արտահայտություն որոնելիս այն ներառեք այս փակագծերում՝ "տեքստ":



Ֆալս 6

Հիշե՛ք, որ համացանցից ջնջված նորությունները հնարավոր է գտնել վեբ արխիվներում, օրինակ՝ **այստեղ**:



Թվային անվտանգությունը գործողությունների համալիր է՝ ուղղված անձի վերաբերյալ թվային տեղեկությունների պաշտպանությանն ընդդեմ համացանցային հանցագործությունների և հարձակումների:

Քենթրիջի բառարան

ԲաՅԼ I

Հիշե՛ք, որ լավագույն գաղտնաբառերը միաժամանակ պարունակում են մեծատառեր, փոքրատառեր, թվեր և նշաններ:

ԲաՅԼ 2

Անվտանգ չէ նույն գաղտնաբառը կիրառել բոլոր օգտահաշիվների համար. այդպիսով, երբ կոտրվի մեկը, կկոտրվեն նաև մյուսները:



ԲաՅԼ 3

Գաղտնաբառեր ստեղծելիս մի՛ կիրառեք այնպիսի բառեր և թվեր, որոնք ուղիղ առնչություն ունեն ձեզ հետ. դրանք հեշտորեն կարելի է կռահել:

ԲաՅԼ 4

Ֆիշինգը խաբեությամբ օգտատիրոջ անձնական, բանկային և այլ տվյալների ստացումն է, որոնց արտահոսքը կարող է հանգեցնել նյութական և բարոյական վնասի:

ԲաՅԼ 5

Երբեք մի՛ հավատացեք առցանց վիճակահանությունների, ժառանգություն ստանալու վերաբերյալ նամակների. դրանք հետապնդում են ֆինանսական շահին ուղղված նպատակներ: Մի՛ ուղարկեք անձնական փաստաթղթերը մեսենջերների միջոցով. ապահով չէ:



ԲաՅԼ 6

Անվտանգության տեսանկյունից խոցելին մարդն է: Որքան էլ անվտանգ լինի գործիքը կամ հարթակը, միևնույն է, այն կարելի է շրջանցել, եթե օգտատիրոջ կողմից թույլ են տրվել սխալներ և բացթողումներ:



Բաժնի
1

Հիշե՛ք, որ ցանկացած տվյալ, որի միջոցով հնարավոր է նույնականացնել անձին, համարվում է անձնական տվյալ. անգամ անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը և այլն:

Բաժնի
2

Երբե՛ք մի շրջանառեք ձեր անձին վերաբերող և ֆինանսական տվյալները հաղորդակցության այնպիսի հարթակներով, ինչպիսիք են մեսենջերները:

“
Անձնական տվյալների պաշտպանությունը համապատասխան վարչական, տեխնիկական կամ ֆիզիկական միջոցների կիրառումն է՝ տվյալների չարտոնված, դիտավորյալ կամ պատահական բացահայտումից, փոփոխումից կամ ոչնչացումից պաշտպանվելու համար:
«Law Insider» ամերիկյան իրավական և պայմանագրային ծառայություններ մատուցող կենտրոն

Բաժնի
3

Հիշե՛ք, որ որևէ մեկը չի կարող ձայնագրել ձեզ՝ առանց այդ մասին իրազեկելու: Գաղտնի ձայնագրությունն իրավախախտում է:

Բաժնի
4

Հիշե՛ք, որ անչափահասի վերաբերյալ անձնական տվյալ հավաքագրելիս պարտավոր են թույլտվություն ստանալ նրա ծնողներից կամ խնամակալից:

Բաժնի
5

Սոցիալական ցանցերում հրապարակված լուսանկարները կարող են չարամտորեն օգտագործվել երեխայի և նրա ընտանիքի անդամների դեմ:

Բաժնի
6

Իսկ դուք գիտե՞ի՞ք, որ Հայաստանում գործում է **«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը**. Ճիշտ պահն է օրենքին ծանոթանալու:

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐՑՎԱԾ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՆՖՈՂԵՄԻԱ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՑ



- **Սխալ տեղեկատվություն** (misinformation) - ճշմարտությանը չհամապատասխանող տեղեկություն, որը տարածողը սովորաբար համոզված է դրա ճշմարտացիության մեջ:
- **Ապատեղեկատվություն** (disinformation) - կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկության կանխամտածված տարածում:
- **Կեղծ լուր** (fake news) - լուր, որը գրված է ապակողմնորոշելու նպատակով:
- **Պրոպագանդա** - մեդիա բովանդակություն (լուրեր, արշավներ), որը ստեղծվում է հանրային կարծիքի վրա ներազդելու նպատակով:
- **Տեղեկությունների ճշգրտում** (information verification) - լրագրության հիմնարար սկզբունք, որը ենթադրում է տվյալների, ապացույցների, վկայությունների հավաքում, անհրաժեշտության դեպքում փորձերի անցկացում, դրանց վերաբերյալ եզրակացությունների կայացում՝ տեղեկությունների ճշմարտացիության մեջ համոզվելու և դրանք որպես փաստ ընդունելու նպատակով:
- **Փաստ** - մատչելի տվյալների ամբողջությունը, որը ցույց է տալիս, որ կոնկրետ համոզմունքը, գաղափարը, եզրակացությունը ճիշտ է կամ վավեր:
- **Փաստերի ստուգում** (fact checking) - արդեն հրապարակված, հայտարարված փաստերի ու տվյալների ստուգում՝ դրանք հերքելու կամ հաստատելու նպատակով:
- **Կողմնակալություն** - հակում կամ նախապաշարում կոնկրետ անձի կամ խմբի նկատմամբ, որը կարող է լինել նպատակային կամ չգիտակցված և դրսևորվել ինչպես լրատվական բովանդակության ստեղծման, այնպես էլ սպառման մակարդակներում:
- **Մանիպուլյացիա** - նախապես սահմանված նպատակով բովանդակության վրա ազդելու, վերահսկելու կամ շեղելու պրակտիկա, որը հաճախ նպատակ ունի առաջ մղել մեդիայի վրա լծակներ ունեցող ինստիտուցիոնալ դերակատարների, քաղաքական գործիչների, որոշակի խմբերի շահերը:

ԲՈՒՈՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՅՔՈՒՄ՝ «ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ



- **Մեդիախաչբառ**. մեդիա և թվային գրագիտություն, թվային անվտանգություն և անձնական տվյալների պաշտպանություն
- **«Թվային պոչ»**. հեքիաթ երեխաների համար
- **«Կըտ-կըտ ճուտիկը»**. հեքիաթ երեխաների համար
- **«Լինում է չի լինում... առցանց»**. հեքիաթ երեխաների համար
- **«Վստահելի տեղեկությունների որոնում»**. ուսումնամեթոդական ձեռնարկ
- **«Մեդիա քարտեզի ճանապարհորդները»**. կրթական նյութ մեդիայի և հույզերի վերաբերյալ
- **«Երեխաները և մեդիան»**. ձեռնարկ ծնողների և խնամակալների համար
- **«Փաստերի ռադար»**. ինչպես ստուգել տեղեկությունները

<https://www.pjc.am/books>

